ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ, (0234) 6-11-20, (0234) 6-11-30; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2014թվականի N 13-ն

<<ԼՈՒՍԱՌԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի >> 63-րդ հոդվածի 1-ին մասի , <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ մասի և <<Պետական ոչ առեվտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով՝ համայնքի ավագանին՝ որոշեց.

1. <<Լուսառատի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) վերակազմավորման ձևով վերակազմակերպել որպես <<Լուսառատի բժշկական ամբուլատորիա համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՈԱԿ):
2. Ընկերության շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն ընդունել Լուսառատի համայնքային հաշվեկշիռ՝ համաձայն հավելված 1-ի (այսուհետ՝ Հավելված 1):
3. Ընկերության շենքերն ու շինությունները, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքն համաձայն Հավելված 1-ի անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՈԱԿ-ին՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Լուսառատ համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:
4. Ընկերության տնօրինության տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ բացառությամբ շենքի ու շինությունների, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքի, սեփականության իրավունքով հանձնել ՀՈԱԿ-ին՝ որպես իրավահաջորդի:
5. Հաստատել՝

ա/ ՀՈԱԿ-ի գույքի կազմը՝ համաձայն Հավելված 2-ի:

բ/ ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի:

6. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել ՀՈԱԿ-ի պետական գրանցումը՝ Ընկերության միջոցների հաշվին:

7. Կազմակերպության կառավարման, ինչպես նաև՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «է» ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Լուսառատ համայնքի ղեկավարին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԵՎՈՐԳ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՔԵՇԻՇՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ